ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐՈՒՄ

ՄԽՈՅԱՆ Գ. Վ.

Քաղաքական ընդդիմության բնութագրման հարցում կարևոր նշանակություն ունի այդ ինստիտուտի ուսումնասիրությունը տարբեր մշակութային միջավայրերում, քանզի դրա ձևավորումը, գործունեությունն ու կենսունակությունը մեծապես կախված են տվյալ մշակութային միջավայրից ու դրանում առկա պայմաններից:

Անշուշտ, ժողովրդավարական քաղաքական համակարգի առանցքային բնութագրիչներից է քաղաքական ընդդիմությունը: Նման համակարգերում ընդդիմությունը դիտվում է իբրև հասարակական, քաղաքական կյանքի անհրաժեշտ բաղադրատարր, որը հասարակությանը հնարավորություն է տալիս տարբեր հիմնախնդիրների առնչությամբ, բացի պաշտոնականից, ունենալու նաև այլընտրանքային տեսակետներ ու տարբերակներ[1]:

Քաղաքական ընդդիմության ինստիտուտի ձևավորման ու զարգացման ուսումնասիրությունը թույլ է տալիս պատկերացում կազմել նաև տվյալ մշակութային միջավայրի առանձնահատկությունների, ինչպես նաև այն մասին, թե այս կամ այն քաղաքական մշակույթն ինչպես է ազդում քաղաքական ընդդիմության վարքի վրա:

Ընդհանուր առմամբ, միջավայրը երկու և ավելի սուբյեկտների փոխհարաբերությունների և հաղորդակցման արդյունքն է: Մշակութային միջավայրը մարդկանց որևէ խմբի փոխազդեցության և հարաբերությունների մեքենայական հանրագումար չէ: Այն ներկայացնում է ողջ մշակույթը՝ իր գործառույթներով ու գործընթացներով, ձևերով և բովանդակությամբ: Այն բնակչության մշակութային նախընտրությունների համալիրն է՝ տեղայնացված որոշակի սահմաններում: Կառուցվածքային առումով, մշակութային միջավայրը բաղկացած է չորս հիմնական բաղադրիչներից՝ ***1. խորհրդանշային գործունեություն****, որն իրականացնում է մարդկանց կողմից նախընտրելի սոցիալական վարքի ձևավորման գործառույթը,* ***2. կարգավորված սոցիալական վարք****,* ***3. լեզու****, որի միջոցով իրա-կանացվում է*

---

[1] **Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ս.,** *Քաղաքագիտություն, հանրագիտական բառարան, Ե., 2004, էջ 123:*

*սոցիալական հաղորդակցությունը, **4. բարքեր**, որոնք ապահովում են սոցիալական փոխազդեցությունների կարգավորումը*[2]*:*

Մշակութային տարբեր միջավայրերում քաղաքական ընդդիմության ուսումնասիրությունը հիմնվում է մի շարք հարացույցների վրա: Անդրադառնանք դրանց:

*1. **Ընդդիմության ազգային էթնիկական կազմ:** Քաղաքական ընդդիմությունը հանդես է գալիս որպես մեկ էթնիկական խմբի շահերի պաշտպան: Ընդդիմության այս տիպի օրինակ կարող են լինել Սիրիական թուրքմենների ասամբլեան, Սիրիական ժողովրդավարական թուրքմենների շարժումը և այլն: Հարկ է նշել, որ Սիրիական ընդդիմությանը բնորոշ է էթնիկական ուղղվածությունը: Ընդդիմադիր խմբերի թվում էր նաև Քրդական գերագույն հանձնաժողովը, որը կառավարում էր քրդական տարածքները և միավորում երկու կուսակցություն՝ Քրդական ժողովրդավարական միություն և Քրդական ազգային խորհուրդ: Ասենք, որ Քրդական գերագույն հանձնաժողովի նպատակը քուրդ ազգաբնակչության պաշտպանությունն էր, ի տարբերություն Սիրիական ազգային խորհրդի, որը պայքարում էր իշխանության ապակենտրոնացման համար*[3]*:*

*2. **Ընդդիմության պահանջների բնույթ՝ չափավոր, ագրեսիվ:** Ընդդիմության չափավոր պահանջներ ներկայացնող տիպի մեջ կարող ենք դասել եվրոպական մի շարք երկրների քաղաքական ընդդիմությունները: Մասնավորապես Մեծ Բրիտանիայում ընդդիմությունը համարվում է խորհրդարանական՝ կենտրոնացված, առանց վետոյի իրավունքի: Այստեղ փոքր կուսակցությունների համար ստեղծված են խորհրդարանում ներկայացված լինելու հնարավորություններ: Սակայն ինչպես հիմնական ընդդիմադիր կուսակցությունը, այնպես էլ փոքր կուսակցությունները չունեն լուրջ և ծանրակշիռ հարցերում վետո դնելու իրավունք: Ընդդիմությունն այս երկրում որդեգրել է հետևյալ վարքը. ավելի լավ է իշխանություններին թողնել սխալվել իրենց քաղաքականության մեջ և կորցնել հասարակական վստահությունը, և այս դեպքում ընդդիմության հնարավորությունները ինքնըստինքյան կմեծանան: Ընդհանուր առմամբ, բրիտանական քաղաքական մշակույթում առաջնային են համարվում հնարավորինս բարձր մակարդակի թափանցիկությունը որոշումների ընդունման գործընթացում և*

---

[2] **Флиер А. Я.** *Культурная среда и ее социальные черты, Информацион-ный гуманитарный портал «Знание. Понимание. Умение», 2013, N 2, http://www.zpu-journal.ru/e-zpu/2013/2/Flier_Cultural-Milieu/, մուտք՝ 17.I.2016, 21:30:*

[3] *"The Kurdish National Council in Syria". Carnegie Middle East Center. Retrieved 24 July 2012.*

իշխանությունների հաշվետու լինելը: Ընտրազանգվածի համար կա իշխանության և ընդդիմության միջև ընտրություն անելու լայն հնարավորություն[4]*:*

3. ***Ընդդիմության ներկայացվածությունը իշխանական կառույցներում, նրա պահանջների ընդունելի լինելը իշխանությունների կողմից և վերջինիս վերաբերմունքը ընդդիմության նկատմամբ:*** *Այս կամ այն երկրի քաղաքական մշակույթի կամ համակարգի բնութագրման հարցում էական նշանակություն ունի նաև ընդդիմադիր կուսակցությունների և խմբավորումների ներկայացվածությունը կառավարությունում ու խորհրդարանում: Թե՛ արևելյան և թե՛ արևմտյան քաղաքական համակարգերում թույլատրվում է ընդդիմության որոշակի ներկայացվածություն իշխանական կառույցներում, սակայն նրանց գործունեությունը խիստ սահմանափակված է հատկապես արևելյան քաղաքական համակարգերում: Այս առումով կարևոր է այն հանգամանքը, թե ինչպես են ընդդիմությանը վերաբերվում իշխանությունները. առկա՞ է արդյոք բացարձակ հակակրանք կամ ընդհակառակը՝ ընդդիմության և իշխանության միջև բացակայում է հակամարտությունը, իշխանության վերաբերմունքը ընդդիմության նկատմամբ դրակա՞ն է, բացասակա՞ն, թե՞ լոյալ և այլն: Բավական հետաքրքիր է քաղաքական ընդդիմության ամերիկյան մոդելը, որը հայտնի է որպես իշխանությունների տարանջատման մոդել: Ամերիկյան քաղաքական համակարգում, ինչպես Նելսոն Պոլսբին է նշում, ընդդիմության գործունեության հիմնական վայրը Կոնգրեսն է: Շատ հետազոտողներ ամերիկյան քաղաքական համակարգում Կոնգրեսի և նախագահի հարաբերությունները համարժեք են համարում իշխանության և ընդդիմության հարաբերություններին՝ կառավարման համակարգում*[5]*:*

Շվեյցարիայում գործող ընդդիմության մոդելը ուղղակի անվանվում է **դեմոկրատական***: Այս երկրի քաղաքական համակարգին բնորոշ է իշխանության՝ ժամանակավոր կոալիցիաներում հնարավորինս մեծ քանակությամբ ընդդիմադիր ուժեր ներգրավելու ձգտումը՝ այս կամ այն խնդիրը լուծելու համար*[6]*:*

Ի տարբերություն եվրոպական առաջատար պետությունների՝ հետխորհրդային տարածաշրջանում և Ասիայում ընդդիմության նկատմամբ իշխանության վերաբերմունքը բացասական է: Այստեղ քաղաքական մշակույթի մաս է կազմում քաղաքական ընդդիմության նկատմամբ ճնշումների և հալածանքների կիրա-

---

[4] **Lunger Helms.** *Five Ways of Institutionalizing Political Opposition, Lesson from Advanced Democracies, Government and Opposition Ltd, Oxford, UK 2004, pp. 25-30.*

[5] *Նույն տեղում, էջ 40-45:*

[6] *Նույն տեղում, էջ 45-49:*

ռումը: Քաղաքագետ Ռ. Ուինտրոբը ճնշումները բնութագրում էր որպես իշխանությունների քննադատության հարցում քաղաքացիների իրավունքների, խոսքի ազատության, ինչպես նաև ընդդիմադիր կուսակցությունների կողմից իշխանության համար պայքարի սահմանափակում[7]: Դա գրեթե ամբողջությամբ բնութագրում է ոչ միայն քաղաքական ընդդիմության նկատմամբ Եվրասիայում տարածված քաղաքականությունը, այլ նաև քաղաքացիների նկատմամբ կիրառվող սահմանափակումները: Եվրասիական պետություններում տարածված են ճնշումների և հալածանքների կիրառման տարբեր ռազմավարություններ: Ճնշումները, սովորաբար, կիրառվում են ընտրությունների միջև ընկած ժամանակաշրջանում: Ինչ վերաբերում է ընտրությունների ժամանակ իշխանությունների որդեգրած քաղաքականությանը, ապա այն համեմատաբար մեղմ է, քանի որ այդ շրջանում ճնշումների կիրառումը չի բխում իշխանությունների շահերից և կարող է բացասաբար անդրադառնալ նրանց հեղինակության վրա: Այդպիսին էին, օրինակ՝ Վրաստանում Շևարդնաձեի կիրառած «ընդհատվող հալածանքները»: Այս ռազմավարության ժամանակ թիրախներն ընտրվում էին պատահականության սկզբունքով: Ընդդիմության դեմ բացահայտ բռնի մեթոդների փոխարեն, ավելի շատ սպառնալիքներ էին հնչում: Ադրբեջանում նման ռազմավարություն էր իրականացնում Հեյդար Ալիևը: Այս դեպքում ընդդիմադիր ուժերը դառնում էին կառավարության ուժերի դատավարությունների զոհ, երբ փորձում էին ներգրավվել քաղաքական գործողությունների և քննարկումների մեջ: Ղազախստանում ընդդիմության նկատմամբ կիրառվող քաղաքական ճնշումներն անվերապահ բնույթ են կրում, դրանք կայուն են, ներառում են բռնություն ցանկացած ընդդիմության նկատմամբ, եթե նույնիսկ այն քաղաքական իշխանության չի ձգտում[8]:

Քաղաքական ընդդիմության առաջացման կարևոր նախապայմաններից են ոչ միայն ընդդիմադիր գաղափարների առկայությունը, այլ նաև այնպիսի հանգամանքներ, որոնց պարագայում հայտնի են խաղի կանոնները. կան իրական մեխանիզմներ, որոնց հիման վրա կկարողանան գործել քաղաքականության սուբյեկտները՝ իշխանությունը և ընդդիմությունը: Հետխորհրդային տարածաշրջանում նմանատիպ պայմանները բացակայում են, հետևաբար, քաղաքական ընդդիմությունը գոյություն ունի ձևականորեն:

---

[7] *The Logic of Kleptocracy: Corruption, Repression, and Political Opposition in Post-Soviet Eurasia, September, 2012, p. 14;* **Wintrobe R.** *The Tinpot and the Totalitarian: An Economic Theory of Dictatorship (The American Review of Political Science, Vol. 84, 1990, No 3, pp. 849-872).*

[8] *Նույն տեղում:*

Արևելյան քաղաքական մշակույթում ընդդիմության նկատմամբ առկա է անհանդուրժողական վերաբերմունք: Դիտարկենք Չինաստանի օրինակը: Այս երկիրը դասվում է այն պետությունների շարքին, որոնցում որևէ հակառակություն քաղաքական իշխանությանը՝ տվյալ դեպքում Չինաստանի կոմունիստական կուսակցությանը, ավարտվում է իշխանությունների կողմից բռնության կիրառմամբ: Չինաստանում առկա են որևէ այլընտրանքի մերժում, խիստ գրաքննություն: 1966 թ. նոյեմբերից մինչև 1976 թ. հոկտեմբեր տասնամյակը Չինաստանի ժողովրդավարության պատմության մեջ հայտնի է որպես «մշակութային հեղափոխության» ժամանակաշրջան: Այս հեղափոխության վրա որոշիչ ազդեցություն ունեցավ Մաո Ցզեդունը, որի հայացքները միտված էին ամրապնդելու գործող քաղաքական կուսակցության դիրքերը և այն դարձնելու առաջնորդ կուսակցություն: Այդ նպատակով Մաո Ցզեդունը իր առջև խնդիր էր դրել լուծել երկու հարց. **նախ՝** *ճանապարհից հեռացնել ընդդիմությունը, որ սկսել էր տնտեսական բարեփոխումների գաղափարներ առաջ քաշել, և* **երկրորդ՝** *ինչ-որ բանով շեղել ժողովրդական զանգվածների ուշադրությունը[9]: 1960-ականի կեսերին Մաո Ցզեդունի քաղաքականության նկատմամբ կուսակցության ներսում առաջացել էին դժգոհություններ: Լյու Շաոցին և Դեն Սյաոպինը հանդես եկան Չինաստանի զարգացման ավելի համեստ ու չափավոր ծրագրերով: Եվ կուսակցության առաջնորդը սկսեց զանգվածային ահաբեկչություններ իրականացնել այլախոհների նկատմամբ: Շաոցին և նրա համախոհները ենթարկվեցին Չինաստանի կոմկուսի համար սովորական դարձած «մեկուսացման» քաղաքականությանը:*

Ընդդիմության նկատմամբ նման վերաբերմունքը կարելի է բացատրել չինական քաղաքական մշակույթով: Սա այն երկրներից է, որը երբեք չի ունեցել ժողովրդավարական կառավարման համակարգ: Կայսերական իշխանության տապալումով տեղի ունեցավ միայն ղեկավար մարմնի և ոչ թե համակարգի փոփոխություն: Ներկայումս Չինաստանում շարունակում է իշխել մեկ կուսակցություն, ինչը, սակայն, չի խանգարում երկրի տնտեսական զարգացմանը, ինչպես նաև հասարակական լայն շրջանակներում իշխանության հեղինակության պահպանմանը: Ընդդիմության ձևավորման իրատեսական հիմքեր այս երկրում չկան: Գերիշխող միակ կուսակցության դիրքերի ամրապնդմանը նպաստում է նրա շարքերի համալրման այնպիսի քաղաքականությունը, որն արտահայտվում է հասարակության անդամների ներգրավմամբ և

---

[9] **Dennis T. Y.** *China's Agricultural Crisis and Famine of 1959-61: A Survey and Comparison to Soviet 29.–Famines, Comparative Economic Studies, Vol. 50, Issue 1 (2008), p. 7.*

հատկապես երիտասարդների անդամագրմամբ: Կուսակցության երիտասարդական թևը՝ Կոմունիստ երիտասարդների լիգան, Չինաստանի ամենազանգվածային երիտասարդական կազմակերպությունն է: Համաձայն Չինաստանի կոմունիստական կուսակցության կանոնադրության՝ այն կոմկուսի ղեկավարության ենթակայության ներքո գործող առաջադեմ երիտասարդների կազմակերպություն է, հանդես է գալիս որպես կուսակցական դպրոց, որտեղ մեծ քանակությամբ երիտասարդներ սովորում են, թե ինչ է սոցիալիզմը՝ չինական տարրերով և գործնականում յուրացնում են կոմունիզմի գաղափարախոսությունը: Լիգան բնորոշվում է որպես կուսակցության հիմնական աջակից և պահեստային ուժ[10]: Այսպիսի պայմաններում, բնականաբար, ընդդիմության հնարավորությունները խիստ սահմանափակ են դառնում:

4. ***Զինված պայքար մղելու հակվածություն:*** *Այս դեպքում քաղաքական ընդդիմությանը գնահատական է տրվում՝ հիմնվելով հակվածության բարձր կամ ցածր ցուցանիշների վրա: Զինված պայքար մղելու բարձր հակվածություն ունի հատկապես սիրիական քաղաքական ընդդիմությունը: Սիրիայում այն ձևավորվել է քաղաքացիական ընդդիմության հիման վրա՝ մի շարք ընդդիմադիր խմբերի ջանքերով, որոնք պահանջում էին Բաշար Ասադի հրաժարականը և քաղաքական ռեժիմի փոփոխություն: Ընդդիմության կորիզը կազմում էին աշխատավոր և միջին դասի երիտասարդները, էական դեր էին խաղում կանայք և էթնիկական ու կրոնական բազմազան խմբերը: Այս խմբերից շատերը հեռու էին կանգնած ավանդական քաղաքական գաղափարախոսություններից, բայց նրանց գործունեության շարժառիթները վերաբերում էին ազատության, մարդու իրավունքների, անվտանգության խնդիրներին[11]:*

5. ***Ընդդիմության գաղափարախոսությունը****: Արդյոք առկա՞ է հստակ գաղափարախոսություն կամ այն բացակայու՞մ է: Գաղափարախոսական վակուումը բնորոշ է գրեթե բոլոր հասարակություններին: Սովորաբար ընդդիմությունն ունակ չէ մշակելու հստակ գաղափարախոսություն: Սա հատկապես ակնհայտ է արևելյան քաղաքական մշակույթում:*

---

[10] *Constitution of the Communist Party of China (փոփոխվել և ընդունվել է Չինաստանի կոմունիստական կուսակցության 17-րդ ազգային համագումարում՝ 21.X.2007), http://english.cpc.people.com.cn/65732/6758063.html, մուտք՝ 21.X.2015, 22:05:*

[11] *Leila Shrooms for Tahrir-ICN, SYRIA: The struggle continues: Syria's grass- roots civil opposition, September 16, 2013/ https://tahriricn.wordpress.com/2013/09/16 /syria-the-struggle-continues-syrias-grass-roots-civil-opposition/ մուտք՝ 03.12.2015 թ., 15: 30:*

6. ***Ընդդիմության կառուցվածքը:*** *Այն կարող է լինել կազմակերպված կամ տարերային: Սովորաբար ընդդիմության տարերային բնույթը հանդիպում է արևելյան մշակույթում:*

7. ***Ընդդիմության միասնականության աստիճանը:*** *Ընդդիմադիր կուսակցությունների ոչ միասնական լինելը բնորոշ է ոչ միայն արևելյան, այլ նաև արևմտյան քաղաքական մշակույթներին: Օրինակ՝ քաղաքական ընդդիմության ֆրանսիական մոդելը համարվում է խորհրդարանական-նախագահական: Չնայած այն հանգամանքին, որ համագործակցության շրջանում ընդդիմությանը իշխանության կողմից տրվում են առավելություններ, սակայն իշխանական օղակների և նախագահի կողմից ընդդիմության համար ստեղծվում են բավական շատ խոչընդոտներ: Հաճախ իշխանություն-ընդդիմություն փոխհարաբերություններում խոչընդոտներն առաջանում են խորհրդարանական և նախագահական ընդդիմությունների միջև անմիաբանության հետևանքով: Այնուամենայնիվ, որոշ դեպքեր վկայում են, թե խորհրդարանական և նախագահական ընդդիմությունների միջև եղել են ջանքեր՝ հանդես գալու միասնական ռազմավարությամբ: Միտերանի կառավարման տարիներին նախագահը մնում էր որոշումների ընդունման գործընթացի գլխավոր գործիչ, և դրանով սահմանափակվում էին նախագահական ընդդիմության հնարավորությունները: Խորհրդարանական ընդդիմությունը սովորաբար հանդես է գալիս կառավարության հիմնական քաղաքական կուրսի քննադատությամբ*[12]*:*

Միասնականության ցածր աստիճանը բնորոշ է նաև Հայաստանի քաղաքական ընդդիմությանը: Ասվածի օրինակ կարող է լինել նախագահական ընտրություններում ընդդիմադիր կուսակցությունների կողմից առանձին թեկնածուների առաջադրումը մեկ միասնական թեկնածուի փոխարեն, բարեփոխումների մեկ միասնական ծրագրով հանդես չգալը, ինչը կարող է հիմք դառնալ հասարակության մեջ քաղաքական ընդդիմության դիրքերի ամրացման համար և այլն:

Այսպիսով, քաղաքական ընդդիմության ձևավորման և գործունեության ծավալելու նախապայմաններն ու հնարավորությունները տարբեր մշակութային միջավայրերում տարբեր են: Մշակութային մեկ միջավայրում ստեղծված են այդ ինստիտուտի գործունեության լայն հնարավորություններ, մյուսներում դրանք հասցված են նվազագույնի, ավելին, կիրառվում են սպառնալիքներ ու ճնշումներ, կամ ընդդիմությունը ձևական բնույթ է կրում: Քաղաքական ընդդիմության

---

[12] **Lunger Helms**, *նշվ. աշխ., էջ 34-40:*

նկատմամբ վերաբերմունքը, որդեգրված մեթոդները, ընդդիմության գաղափարախոսությունը, միասնականության աստիճանը և այլն, հնարավորություն են տալիս պատկերացում կազմել տվյալ մշակութային միջավայրի մասին:

ОСОБЕННОСТИ ИНСТИТУТА ПОЛИТИЧЕСКОЙ ОППОЗИЦИИ В РАЗЛИЧНЫХ КУЛЬТУРНЫХ СРЕДАХ

МХОЯН Г. В.

Резюме

Изучение института политической оппозиции в разных культурных средах играет важную роль для характеристики этого явления. Формирование и деятельность политической оппозиции во многом зависит от культурной среды и условий, в которых этот институт формируется и действует. Институт политической оппозиции может быть изучен на основе нескольких парадигм. Этими парадигмами являются этнический состав оппозиции (политическая оппозиция выступает в качестве защитника интересов определенной этнической группы), характер оппозиционных требований (умеренный, агрессивный), представленность оппозиции в правительственных структурах, приемлемость ее требований со стороны властей и отношение последних к оппозиции, ее идеология, склонность к вооруженной борьбе, структура института оппозиции, степень единства оппозиции и т.д.

THE FEATURES OF POLITICAL OPPOSITION INSTITUTE IN DIFFERENT CULTURAL ENVIRONMENTS

G. MKHOYAN

Abstract

The study of political opposition institute in different cultural environments has an important role for the characterization of the political opposition. The formation and activity of political opposition largely depends on the cultural environment and conditions where this institute is being formed and operates. The study of political opposition in different cultural environments can be based on several paradigms. These are the ethnic composition of the opposition (the political opposition acts as a protector of the interests of specific ethnic group), the nature of opposition demands (moderate, aggressive), opposition representation in government, the admissibility of its requirements by the authorities and the attitude of the latest to the opposition, its ideology, the propensity for armed struggle, the opposition institute structure, the degree of opposition unity, etc.